A method for self-configurable offset of high-speed clocked comparators is presented. When the clocked comparator is in the pre-charge mode, the recommended method switches on the current compensation circuit which charges the capacitors, depending on the comparator tails currents. The voltage across the capacitor converts into current. The current flows through the latch to the ground during the clock positive edge, subsequently the two tails currents become equal. As a result, the offset substantially reduces and becomes less than the allowed limit.

Keywords: integrated circuit; input/output; clocked comparator; offset.

Ա.Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ՓԱՓՈՒԿ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՎ ԲԼՈԿՆԵՐԻ ՄԻՆԹԵԶԸ ԹՎԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱԼ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Առաջարկված է ինտեգրալ սխեմաների (ԻՄ) տարրերի «փափուկ» բլոկի ստացման մեթոդ՝ հիմնված տրամաբանական սխեմայում ազդանշանների հոսքի գրաֆի (ԱՀԳ) կառուցման և դրանում բինար որոնման բալանսավորված ծառի կիրառմամբ տրամաբանական տարրերի ռանգավորման վրա: Մշակվել են ըստ լայնության փնտրման ալգորիթմի կիրառմամբ ռանգավորված տրամաբանական սխեմայից ֆիզիկական «փափուկ» բլոկի կառուցման մեթոդ և համապատասխան ծրագրային իրագործում: Արդյունքները ցույց են տվել առաջարկված մեթոդի արդյունավետությունը՝ ֆիզիկական նախագծման սկզբնական փուլում միջմիացումների երկարությունների նվազարկման տեսանկյունից:

Առանցքային բառեր. ինտեգրալ սխեմա, ֆիզիկական նախագծում, ռանգավորման ալգորիթմ, «փափուկ» բլոկ:

Ներածություն: Համակարգային ԻՄ-երի առաջանցիկ զարգացումը և դրանցում մտավոր սեփականության բլոկների քանակի ավելացումը կարևորում են նախագծվող բլոկների տրամաբանական սխեմաներից այնպիսի ֆիզիկական կառուցվածքների ստացումը, որոնք մի կողմից՝ հաշվի կառնեն սխեմատեխնիկական առանձնահատկությունները, իսկ մյուս կողմից՝ թույլ կտան դրանց ինտեգրումը տարբեր ֆիզիկական կառուցվածքներում: Այս խնդրի լուծման արդյունավետ ուղիներից է բլոկների ֆիզիկական կառուցվածքի երկփուլային ստացումը [1, 2]:

• Տրամաբանական սխեմայից անցում չպարամետրացված ֆիզիկական բլոկների, որոնք առավել հաշվի են առնում սխեմայի աշխատանքի տրամաբանությունը՝ դրանցում ազդանշանի մշակման հաջորդականության տեսանկյունից: Այս բլոկներն ունեն որոշակի մակերես, սակայն չունեն ուղղանկյան ձև: Այսպիսի բլոկները պայմանականորեն կոչվում են «փափուկ» բլոկներ:

• «Փափուկ» բլոկներից անցում պարամետրացված բլոկների, որոնք հաշվի են առնում ԻՄ-ի հատակագծման նախագծային սահմանափակումները: Այս բլոկներն ունեն կանոնավոր ուղղանկյան տեսք, որի կողերի հարաբեակցությունը տրվում է՝ ելնելով ԻՄ-ում դրանց ֆիզիկական ինտեգրման հարմարավետությունից: Այսպիսի բլոկները պայմանականորեն կոչվում են «կոշտ» բլոկներ:

Ենթամիկրոնային տեխնոլոգիաները առաջադրում են նոր պահանջներ՝ ԻՄ-երի սխեմատեխնիկական և ֆիզիկական նախագծման փուլերի միջև փոխկապվածության ուժեղացման տեսանկյունից: Այս պահանջները առաջին հերթին պայմանավորված են միջմիացումներում ազդանշանի հապաղումներով [3,4]:

Քանի որ միջմիացումների երկարությունները առաջին մոտավորությամբ պայմանավորված են դրանցով միացվող տարրերի տեղաբաշխումով, ապա վերը նշված իրողությունները սկզբունքորեն նոր պահանջներ են առաջադրում տեղաբաշխման խնդրին, և կարևորվում են դրա լուծման այնպիսի մեթոդների և ալգորիթմների մշակումը, որոնք հաշվի կառնեն սխեմայի աշխատանքի տրամաբանությունը, դրանով իսկ նպաստելով միջմիացումներով պայմանավորված արագագործության բարձրացմանը: ԻՄ-երի ֆիզիկական նախագծման փուլում, միջմիացումներով պայմանավորված հապաղումների հաշվառման նպատակով, ներկայումս կարևորվում է ԻՄ-երի տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխման խնդիրը [5, 6]:

Ժամանակով ուղղորդված տեղաբաշխման առկա մեթոդները կարելի է դասակարգել երկու խմբով [6 - 8].

- Ուղու վրա հիմնված մեթոդներ, որոնք հաշվի են առնում սխեմայի առաջնային մուտքերից մինչև ելքերը տանող ուղիներում ազդանշանի հապաղումները:
- Շղթայի վրա հիմնված մեթոդներ, որոնք հաշվի են առնում ազդանշանի հապաղումը սխեմայի յուրաքանչյուր շղթայում:

Համապատասխանաբար նրանց առավելություններն են՝ գլոբալ օպտիմումին հասնելու պոտենցիալ հնարավորությունը և ալգորիթմական փոքր բարդությունը՝ $O(n \cdot \log(n))$, իսկ թերությունները՝ ալգորիթմական մեծ բարդությունը՝ $O(n!)$ և լոկալ օպտիմումի առկայությունը:

Պետք է նշել, որ երկու դեպքում էլ թույլ է արտահայտված տեղաբաշխման արդյունքի և սխեմայի աշխատանքի տրամաբանական կապը:

Այս թերության հաղթահարման նպատակով առաջարկվում է տրամաբանական բլոկների ֆիզիկական կառուցվածքի սինթեզի նոր մոտեցում, որը հիմնված է տրամաբանական սխեմայի ռանգավորման վրա և միտված է միջմիացումների երկարության և, հետևաբար, դրանցում հապաղումների նվազեցմանը:

Մեթոդի նկարագրությունը: Տրամաբանական բլոկների ֆիզիկական կառուցվածքի սինթեզի առաջարկվող մեթոդը ենթադրում է հետևյալ քայլերի հաջորդական կատարումը.

- տրամաբանական սխեմայի Verilog նկարագրի փոխարկում ԱՀԳ-ի,
- սխեմայի տարրերի ռանգավորում,
- տարրերի տեղաբաշխում՝ համաձայն ռանգավորման («փափուկ» բլոկի ստացում):

ԱՀԳ-ն ներկայացնում է $\Gamma(C, G)$ ուղղորդված գրաֆ, որում $C = \{c_1, c_2, \dots, c_n\}$ գագաթները և $G = \{g_1, g_2, \dots, g_m\}$ կողերը համապատասխանում են սխեմայի տարրերի և շղթաների բազմություններին, իսկ n -ը և m -ը տարրերի և շղթաների քանակներն են:

Տրամաբանական սխեմայի Verilog նկարագրից ԱՀԳ-ի ստացման և սխեմայի տարրերի ռանգավորման նպատակով օգտագործված է տվյալների ներկայացման բինար բալանսավորված ծառի սկզբունքը: Այս նպատակով բոլոր տարրերին տրվում

են id նույնականացման համարներ, որոնք գրանցվում են բինար բալանսավորված ծառում՝ (C++ լեզվում STD գրադարանի `std::set`-ում) `cells_with_no_rank`: Սկզբնական վիճակում բոլոր տարրերին տրվում է 0 ռանգ:

Ռանգավորման ալգորիթը բաղկացած է 4 հիմնական քայլերից.

1. Առաջնային մուտքային բոլոր շղթաներին (Verilog ֆայլում `input` դաշտի դիմաց գրված շղթաները) վերագրել 1-ին ռանգը: Այն բոլոր տարրերին, որոնց բոլոր մուտքային շղթաները սխեմայի առաջնային մուտքային շղթաներ են, տրվում է 1-ին ռանգը:

2. Բոլոր այն տարրերը, որոնց մուտքային բոլոր շղթաներն ունեն 0-ից տարբեր ռանգ, ստանում են առավելագույն ռանգ ունեցող շղթայի ռանգը, իսկ նրանց ելքային շղթային տրվում է 1-ով ավելի ռանգ:

Եթե c_i տարրի ռանգը նշանակենք $r(c_i)$, իսկ g_i շղթայի ռանգը՝ $r(g_i)$, ապա սկզբնական վիճակում կլինի՝

$$r(c_i) = 0, r(g_i) = 0, r(c_i) = r(g_{\max}), r(g_{\text{out}}) = r(c_i) + 1,$$

որտեղ $v_{\max}$ -ը i -րդ տարրի մուտքային շղթաներից առավելագույն ռանգ ունեցողն է, իսկ v_{out} -ը՝ i -րդ տարրի ելքային շղթայի ռանգը:

3. Եթե 2-րդ քայլից հետո դեռ կան այնպիսի տարրեր, որոնք չունեն ռանգ (այսինքն՝ $r(c_i) = 0$), ապա դա նշանակում է, որ գրաֆում գոյություն ունի տարրերի այնպիսի հաջորդականություն, որը կազմում է փակ շրջան՝ ցիկլ, ինչը համապատասխանում է սխեմայում առկա հետադարձ կապին: Չռանգավորված տարրերի այդ ցիկլը գտնելու համար սկսում ենք կամայական c_i տարրից, որը չունի ռանգ: Եթե տարրը ռանգ չունի, դա նշանակում է, որ նրա գոնե մեկ մուտքային շղթա՝ v_k ռանգ չունի, այլապես 2-րդ քայլում c_i տարրը կռանգավորվեր: Գրանցում ենք c_i -ին և շարունակում հետևյալ կերպ: Հաշվի առնելով, որ ունենք ցանկացած շղթայի սկզբին և վերջին միացված բոլոր տարրերը, հետևաբար՝ կգտնենք v_k շղթայի սկզբին միացված տարրը՝ c_p -ն, որը չունի ռանգ, հակառակ դեպքում v_k շղթան կունենար ռանգ: Գրանցում ենք նաև c_p տարրը և կունենանք մեր որոնելի ցիկլի արդեն 2 տարրերի հաջորդականություն՝ c_i և c_p : Մա շարունակվում է այնքան, մինչև նորից հանդիպենք արդեն իսկ գրանցված տարրի: Այսպիսով, ցիկլը փակվում է:

4. Նախորդ քայլում հայտնաբերված ցիկլից հեռացվում է 1 շղթա, որի հետևանքով ցիկլը փոխարկվում է ուղղակի տարրերի հաջորդականության:

Այս քայլից հետո վերադառնում ենք 2-րդ քայլին: Այս ամենը կատարվում է այնքան ժամանակ, մինչև 2-րդ քայլից հետո բոլոր տարրերը ռանգավորվեն:

Մեթոդի ծրագրային իրագործումը: Վերը շարադրված ռանգավորման ալգորիթի հենքի վրա մշակվել է տրամաբանական սխեմայի ռանգավորման և ֆիզիկական «փափուկ» բլոկի կառուցման ծրագրային միջոց: Այն, մուտքում ստա-

նալով տրամաբանական սխեմայի Verilog նկարագիրը և տրամաբանական տարրերի ֆիզիկական չափսերը, ելքում տալիս է ֆիզիկական «փափուկ» բլոկի կառուցվածքը: Ծրագրի աշխատանքը դիտարկենք ISCAS89 գրադարանի c27.v թեստային սխեմայի օրինակով, որի Verilog ֆայլը հետևյալն է [9]՝

```

1.  module s27(CK,G0,G1,G17,G2,G3);      10.  and AND2_0(G8,G14,G6);
2.  input CK,G0,G1,G2,G3;                11.  or OR2_0(G15,G12,G8);
3.  output G17;                           12.  or OR2_1(G16,G3,G8);
4.  wire G5,G10,G6,G11,G7,G13,           13.  nand NAND2_0(G9,G16,G15);
    G14,G8,G15,G12,G16,G9;              14.  nor NOR2_0(G10,G14,G11);
5.  dff DFF_0(CK,G5,G10);                15.  nor NOR2_1(G11,G5,G9);
6.  dff DFF_1(CK,G6,G11);                16.  nor NOR2_2(G12,G1,G7);
7.  dff DFF_2(CK,G7,G13);                17.  nor NOR2_3(G13,G2,G12);
8.  not NOT_0(G14,G0);                   18.  endmodule
9.  not NOT_1(G17,G11);

```

Նշենք, որ ծրագրային միջոցը հաշվի չի առնում սինթրոագրանշանային CK շղթան, և այն չի երևում ծրագրի գրաֆիկական ինտերֆեյսում:

ԱՀԳ-ի ստացման նպատակով առանձնացվել են մի քանի կոնտեյներներ՝

- 1) “vector<Cell> g_cells”՝ բոլոր տարրերի զանգվածը,
- 2) “vector<Wire> g_wires”՝ բոլոր շղթաների զանգվածը,
- 3) “set<int> g_input”՝ input շղթաների id-ների set,
- 4) “set<int> g_output”՝ output շղթաների id-ների set,
- 5) “map<string, int> g_gate_name_to_id”՝ map՝ տարրի անունից դեպի իր id:

Այս թվարկված կոնտեյներները C++ ստանդարտ գրադարանից են:

vector-ը զանգված է, set-ը և map-ը բինար որոնման բալանսավորված ծառեր են:

Դիտարկվող սխեմայի շղթաների բինար որոնման բալանսավորված ծառը պատկերված է նկ. 1-ում, որտեղ երևում են շղթաների նշանակումները, համապատասխան id-երը և նրանց միջև առկա փոխկապվածությունները: Այսպիսի ներկայացումը շղթաների n քանակի դեպքում հնարավորություն է տալիս վատագույն դեպքում՝ $O(\log n)$ բարդությամբ գտնել ցանկացած շղթայի id-ն:

“vector<Cell> g_cells” և “vector<Wire> g_wires” զանգվածները կառուցված են այնպես, որ պարունակում են բինար որոնման բալանսավորված ծառի առանձին տարրական հատվածները:


Ստորև դիտարկված են ռանգավորման ալգորիթի վերը բերված 4 քայլերից անմիջական ռանգավորումն իրագործող առաջին երկուսի ֆունկցիաները:

1-ին քայլի ֆունկցիան.

Բոլոր տարրերին (g_cells) և բոլոր շղթաներին (g_wires) տրվում է 0 ռանգ:

Ինչպես երևում է Verilog ֆայլի 2-րդ տողից, սխեմայի մուտքային տարրերը կլինեն՝ G0,G1,G2,G3 շղթաները, որոնց id-երը ԱՀԳ ստանալիս գրանցվում են

input բինար որոնման բալանսավորված ծառի մեջ (C++ ում `std::set<int>` տիպն է): Ծրագիրը, իտերացիա կատարելով input ծառի բոլոր անդամներով (որոնց մեջ գրված են G0,G1,G2,G3 շղթաների id-երը՝ 0,1,3,4), ամեն քայլին վերցնում է հերթական ծառի մեջ գրանցված id-ն, այնուհետև “vector<Wire> g_wires” զանգվածից գտնում է համապատասխան id ունեցող շղթան: Այդ որոնումը տեղի է ունենում հաստատուն ժամանակում, քանի որ g_cells -ը ներկայացնում է զանգված, իսկ id – ն՝ տարրի դիրքի համարը այդ զանգվածում: Շղթան գտնելուց հետո նրա ռանգին վերագրվում է 1, քանի որ բոլոր մուտքային շղթաներին ալգորիթմը վերագրում է 1: Արդյունքում կունենանք g_wires զանգվածի ռանգերի պարունակությունը:



Նկ.1. Բոլոր շղթաները և դրանց տրված id-երը (g_gate_name_to_id) բինար որոնման բալանսավորված ծառում

Նույն տրամաբանությամբ, անցնելով cells_with_no_rank-ի (որոնք ռանգ չունեն) բոլոր տարրերի վրայով, ծրագիրը ստուգում է՝ եթե նրա մուտքային բոլոր շղթաները ռանգավորված են (այսինքն՝ բոլորն էլ 0-ից մեծ թվեր են), ապա տրամաբանական տարրի ռանգին տրվում է $r(c_i) = r(g_{\text{imax}}) + 1$, ինչպես նշված է վերևում: Արդյունքում կունենանք g_cells զանգվածի ռանգերի պարունակությունը:

2-րդ քայլի ֆունկցիան.

Սկզբում կռանգավորվի միայն NOT_0 տարրը այն պատճառով, որ նրա միակ մուտքային G0 շղթան ունի ռանգ 1, հետևաբար՝ ինքն էլ կստանա ռանգ 1, իսկ նրանից դուրս եկող շղթան կստանա $1+1 = 2$ ռանգը: Մնացած բոլոր տարրերի և շղթաների ռանգերը չեն փոխվի, քանի որ առկա է կոնտուր՝ ցիկլ: Հետևաբար՝ անցում ենք կատարում 3-րդ քայլին: Այս ֆունկցիայի արագագործությունը նույն-

պես պայմանավորված է id-երով դիմումների իրականացման հաստատուն ժամանակով:

3-րդ և 4-րդ քայլերն ապահովում են ալգորիթմի բազմակրկնվող բնույթը:

Արդյունքում՝ դիտարկվող սխեմայի բոլոր տարրերը կստանան իրենց ռանգերը՝ DFF_1, NOT_0, NOR2_2 - 1-ին ռանգ; AND_2_0, NOR2_3 - 2-րդ ռանգ; OR2_1, OR2_0, DFF_2- 3-րդ ռանգ; NAND2_0 - 4-րդ ռանգ; NOR2_1 - 5-րդ ռանգ; NOR2_0, NOT_1 - 6-րդ ռանգ; DFF_0 - 7-րդ ռանգ:

«Փափուկ» բլոկի սինթեզը: Սխեմայի համար ունենալով $\Gamma=(C,G)$ գրաֆը, կարող ենք տարրերի ռանգերին համապատասխանության մեջ դնել տեղաբաշխման X և Y կոորդինատները: Որևէ i -րդ տարրի X կոորդինատը կլինի՝

$$\forall c_i \in C, c_i(x) = \beta r(c_i), \quad (1)$$


որտեղ $r(c_i)$ -ն c_i -ը տարրի ռանգն է, իսկ β -ն՝ ամենամեծ երկարությունն ունեցող տարրի երկարությունը:

Տարրերի Y կոորդինատների արժեքները որոշվում են ապագա միջմիացումների երկարությունների մինիմումի պայմանից: Եթե որպես ապագա միջմիացումների երկարությունների գնահատման մոդել վերցնենք լայնորեն օգտագործվող կիսապարագծային մոդելը [1, 5], ապա ակնհայտ է, որ նշված պայմանի ապահովման նպատակով անհրաժեշտ է, որ տարրեր ռանգերում գտնվող միևնույն շղթային պատկանող տարրերի Y կոորդինատների արժեքները լինեն հնարավորինս իրար մոտ՝

$$\forall w_k = \{c_i, c_j\}, |c_i(y) - c_j(y)| \rightarrow \min: \quad (2)$$

Այս խնդիրը լուծելու համար առաջարկվում է օգտագործել գրաֆային ալգորիթմներից հայտնի ըստ լայնության փնտրման ալգորիթմը [10]: Այն կիրառվում է ամենաբարձր ռանգ ունեցող տարրերից սկսած՝ դեպի ձախ, համաձայն (1)-ի: Արդյունքում, համաձայն (2)-ի, ամեն տարրի (բացառությամբ 1-ին ռանգի) ձախ կողմում կտեղադրվի նրա հետ կապված 1-ով փոքր ռանգ ունեցող տարր, ինչն էլ կնպաստի միջմիացումների երկարությունների կրճատմանը:

Տարրերի X և Y կոորդինատների նախնական արժեքները ստանալուց հետո կատարվում է տարրերի տեղաբաշխման լեզալացում, այսինքն՝ տարրերի տողերի և սյուների միջև եղած հեռավորությունների փոքրացում՝ մինչև նվազագույն թույլատրելի չափը, որի արդյունքում ստացվում է «փափուկ» բլոկի վերջնական տեսքը: Մշակված ծրագրային միջոցի գրաֆիկական ինտերֆեյսը՝ s27.v թեստային սխեմայի «փափուկ» բլոկի տեսքով արտապատկերմամբ, բերված է նկ. 2-ում:




Նկ.2. s27.v թեստային սխեմայի «փափուկ» բլոկի տեսքով արտապատկերման գրաֆիկական ինտերֆեյսը

Այն թույլ է տալիս ներմուծել տողերի և սյուների միջև նվազագույն թույլատրելի հեռավորությունը անմիջապես գրաֆիկական ինտերֆեյսից՝ «Min Y distance» և «Min X distance» դաշտերի միջոցով:

Մշակված ծրագրային գործիքի միջոցով «փափուկ» բլոկի սինթեզի ժամանակի՝ տարրերի քանակից կախվածության հետազոտումը ի հայտ է բերել $O(|C|+|G|)$ գծային բարդություն, ինչից էլ հետևում է առաջարկված մեթոդի բարձր արագագործությունը:

Հետազոտության արդյունքները: Մշակված ծրագրային գործիքի արդյունավետության գնահատման համար կատարվել է ինչպես վերը դիտարկված հաջորդական սխեմայի, այնպես էլ ISCAS85 շարքի մի շարք համակցական թեստային սխեմաների տարրերի տեղաբաշխում՝ «փափուկ» բլոկների տեսքով [11]: Որպես տարրային հենք օգտագործվել է «Սինոփսիս-Արմենիայում» մշակված SAED32/28 թվային ստանդարտ բջիջների գրադարանը [12]: Տեղաբաշխման արդյունքները համեմատվել են նույն ալգորիթմական բարդությունն ունեցող ժամանակով ուղղորդված նախնական տեղաբաշխման հաջորդական ալգորիթմի արդյունքների հետ, տարբեր ժամանակային պահուստներով շղթաների երկարությունների տեսքով, որոնք գնահատվել են կիսապարագծային մոդելով [6, 13]: Համեմատական արդյունքները ներկայացված են նկ. 3-ում:

Ինչպես երևում է ներկայացված արդյունքներից, ռանգավորմամբ տեղաբաշխումը որոշիչ շղթաների համար ապահովում է 5...7% կարճացում, ինչը, բնականաբար, կնպաստի սխեմայի արագագործության աճին, իսկ առավելագույն ժամանակի պահուստով շղթաների համար՝ ավելի քան 50% կարճացում, ինչը կհանգեցնի միջմիացումների գումարային երկարության զգալի նվազմանը:



Նկ.3. ա- Ժամանակային տեղաբաշխում՝ հիմնված հաջորդական տեղաբաշխման ալգորիթմի վրա, բ- ռանգավորման վրա հիմնված տեղաբաշխում

Եզրակացություն: Առաջարկվել է «փափուկ» բլոկի ավտոմատացման միջոցի ստացման մեթոդ՝ տրված սխեմայի Verilog նկարագրությունից, և մշակվել է ծրագրային միջոց՝ հիմնված ԱՀԳ-ի ստացման, ռանգավորման և ըստ լայնության փնտրման ալգորիթմների վրա, որն իրագործվել է փորձակվել է թեստային սխեմաների համար: Փորձարկումները ցույց են տվել մեթոդի բարձր արդյունավետությունը՝ արագագործության և միջմիացումների երկարությունների կրճատման տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Andrew B. Kahng, Jens Lienig, Igor L. Markov, Jin Hu.** VLSI Physical Design: From Graph Partitioning to Timing Closure.-Springer, 2011. -310p.
2. Physical Design Implementation / **V. Melikyan, A. Harutyunyan, A. Matevosyan,** et al. – Yerevan: Chartaraget, 2014. – 360p.
3. The International Technology Roadmap for Semiconductors (ITRS). - More Moore, 2015, https://www.semiconductors.org/clientuploads/Research_Technology/ITRS/2015/5_2015%20ITRS%202.0_More%20Moore.pdf.
4. **Khang A., Carballo J.** ITRS 2.0, System Integration Focus Team. - Stanford. 2015. - 39 p.
5. **Naveed A. Sherwani.** Algorithms for VLSI Physical Design Automation. Intel Corporation.-Kluwer Academic Publishers, 2007. - 572 p.

6. Մելիքյան Վ.Շ., Հարությունյան Ա.Գ., Գևորգյան Ա.Ա. Միկրոէլեկտրոնային սխեմաների ֆիզիկական նախագծման մեթոդներ: Մենագրություն/ ՀՊՃՀ.-Եր.: Ճարտարագետ, 2015. - 240 էջ:
7. How accurately can we model timing in a placement engine/ **A. Chowdhary, K. Rajagopal, S. Venkatesan**, et al // Proc. Design Automation Conf.- 2005.- P. 801–806.
8. **Ren H., Pan D., Kung D.** Sensitivity guided net weighting for placement driven synthesis // IEEE Trans. on Computer-Aided Design of Integrated Circuits and Systems.- May, 2005 (ISPD'04).- P. 711–721.
9. ISCAS89 Sequential Benchmark Circuits.
<https://filebox.ece.vt.edu/~mhsiao/iscas89.html>
10. **Кормен Т., Лейзерсон Ч., Ривест Р.** Алгоритмы: построение и анализ. - 2-е изд-е. - М.: Вильямс, 2005. - С. 622-632.
11. ISCAS85 Combinational Benchmark Circuits.
<https://filebox.ece.vt.edu/~mhsiao/iscas85.html>.
12. Digital Standard Cell Library.- SAED_EDK32/28 // SYNOPSYS ARMENIA Educational Department.- Yerevan, 2011. -152 p.
13. **Арутюнян А.Г.** Начальное размещение логических ячеек интегральных схем с учетом важности цепей// Проблемы разработки перспективных микро- и нано-электронных систем – 2014: Сб. тр. / Под общ. ред. акад. РАН А.Л. Стемповского - М.: ИППМ РАН, 2014. - Часть 1.- С.143-146.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 20.02.2019:

Ա.Ր. МАРТИРОСЯН

СИНТЕЗ БЛОКОВ “МЯГКОЙ” ФИЗИЧЕСКОЙ СТРУКТУРЫ ОТ ЛОГИЧЕСКОГО ОПИСАНИЯ ЦИФРОВЫХ ИНТЕГРАЛЬНЫХ СХЕМ

Предложен метод получения “мягкого” блока элементов интегральных микросхем на основе построения графа потока сигналов в логической схеме и ранжирования в нем логических элементов с использованием алгоритма поиска ширины. Разработан метод ранжирования логических схем и построения физического “мягкого” блока и соответствующего программного обеспечения. Результаты показывают эффективность предложенного способа с точки зрения уменьшения длины межсоединения на начальном этапе физического проектирования.

Ключевые слова: интегральная схема, физическое проектирование, алгоритм ранжирования, “мягкий” блок.

A.R. MARTIROSYAN

**SYNTHESIS OF “SOFT” BLOCKS OF PHYSICAL STRUCTURE FROM THE
LOGICAL DESCRIPTION OF DIGITAL INTEGRATED CIRCUITS**

A method for obtaining a “soft” block of integrated circuit (IC) elements based on the construction of signal flow graphs in a logic circuit and ranking of logical elements in it by using the width search algorithm is proposed. A method has been developed for ranking the logic circuits and building a physical “soft” block and the corresponding software. The results show the effectiveness of the proposed method in terms of reducing the length of the interconnect at the initial stage of physical design.

Keywords: integrated circuit, physical design, ranking algorithm, “soft” block.

Վ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՓԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՀՄԿՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՍԱՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ


Ներկայումս շատ մեծ ուշադրություն է դարձվում փակ տարածքների (ինչպիսիք են արտադրական տեղամասերը, ուսումնական հաստատությունները, գրասենյակները և այլն) միկրոկլիմայի պարամետրերին, որոնցով պայմանավորվում են աշխատակիցների առողջական վիճակը, արտադրողականությունը, արտադրանքի որակը, անվտանգության պայմանները և այլն: Աշխատանքում կատարվել է միկրոկլիմայի պարամետրերից մեկի՝ ջերմաստիճանի՝ փակ տարածքներում հսկման և կարգավորման սարքի նախագծում և թեստավորում (հովացման համակարգ): Մտացվել են դրական արդյունքներ, որոնց հիման վրա հնարավոր է պատրաստել միկրոկլիմայի կարգավորման սարք՝ ըստ մի քանի պարամետրերի:

Առանցքային բառեր. միկրոկլիմա, հովացման համակարգ, ջերմաստիճանի վերահսկում, ջերմաստիճանի կարգավորում:

Ներածություն. Մեր օրերում մարդիկ իրենց կյանքի մեծ մասն անց կացնում են փակ տարածքներում, այդ իսկ պատճառով շրջակա միջավայրի միկրոկլիմայի կարգավորումը համարվում է կարևորագույն գործընթաց՝ մարդու նորմալ կենսագործունեության համար: Միկրոկլիմայի հիմնական պարամետրերից են օդի ջերմաստիճանը, հարաբերական խոնավությունը, շարժման արագությունը և այլն [1]: Այս պարամետրերի չափումը բարդ խնդիր է, քանի որ ներառում է որոշվող պարամետրերի մեծ քանակ, չափման տարբեր մեթոդներ, պայմաններ և սանիտարահիգիենիկ պահանջներ տարատեսակ տարածքների համար: Այդ պատճառով հարկավոր է նախագծել սարքեր, որոնք կկատարեն պարամետրերի անընդհատ չափում և դրանց վերահսկում:

Աշխատանքի ընթացքում նախագծվել և թեստավորվել է ջերմաստիճանը հսկող և կարգավորող սարք (հովացման համակարգ), քանի որ ներկայիս արտադրական տեղամասերում, գրասենյակներում և ուսումնական հաստատություններում մեծ ուշադրություն է դարձվում ջերմաստիճանի հսկմանը: Բարձր կամ ցածր ջերմաստիճանների դեպքում հնարավոր է արտադրական պրոցեսի խափանում, արտադրանքի որակի անկում, աշխատակիցների մի շարք հիվանդությունների առաջացում և նրանց աշխատունակության անկում [1]: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նախագծել սրահում ջերմաստիճանի հսկման սարքավորում:

Նախագծում. Սարքի նախագծումը կատարվել է Proteus գործիքամիջոցով: Նախքան էլեկտրոնային սխեման ստանալը՝ նախագծվել է սարքի կառուցվածքային սխեման, որը ներկայացված է նկ. 1-ում (որտեղ TS-ը ջերմաստիճանային տվիչն է, TREF-ը՝ ջերմաստիճանի սահմանային արժեքը, DRIVER-ը՝ շարժիչի աշխատանքի կարգավորիչը, MOTOR-ը՝ շարժիչը, FASTER-ը՝ շարժիչի աշխատանքն արագացնող հանգույցը, SLOWER-ը՝ շարժիչի աշխատանքը դանդաղեցնող հանգույցը, TCHNG-ն՝ սահմանային արժեքի փոփոխումը հաստատող հանգույցը): Պորտի մուտք կամ ելք լինելը նշված է սլաքով:




Նկ. 1. Սարքի կառուցվածքային սխեման


Նախ TS ջերմաստիճանային տվիչից փոխանցվում է տվյալ պահի ջերմաստիճանի արժեքը, իսկ TREF-ից՝ ջերմաստիճանի սահմանային արժեքը: Միկրոկոնտրոլերում կատարվում է վերջիններիս արժեքների թվային ազդանշանի փոխակերպումը, ապա դրանց համեմատումը: Համեմատման արդյունքը փոխանցվում է DRIVER-ին, որը միացնում կամ անջատում է MOTOR-ը: FASTER-ի և SLOWER-ի միջոցով կատարվում է շարժիչի արագության կարգավորում, այսինքն՝ արագացում կամ դանդաղեցում: Այն կատարվում է լայնախիմակության մոդուլացիայի (ԼԻՄ) միջոցով: Ջերմաստիճանի սահմանային արժեքը փոփոխելու դեպքում այն հաստատվում է TCHNG-ի միջոցով:

Համաձայն այս կառուցվածքային սխեմայի՝ նախագծվել է էլեկտրոնային սխեման (նկ. 2):

խմպուլսների տևողությունը: ԼԻՄ-ը երևում է նկ. 4...6-ում օսցիլոգրաֆում ներկայացված ազդանշաններով:

Ստորև ներկայացված է միկրոկոնտրոլեր ներբեռնված ծրագրի աշխատանքի ալգորիթմը (նկ. 3):





Նկ. 3. Ծրագրի աշխատանքի ալգորիթմը

Ըստ ալգորիթմի՝ AVR studio-ում ստացվել է կառավարման ծրագիրը [4-6]:
Ծրագրում T1 թայմերի ուղղաճշտումը PC PWM ռեժիմում ունի հետևյալ տեսքը.

```

.....
ldi temp,$A3
out TCCR1A,temp
ldi temp,$00
  
```

```

out TCCR1B,temp
ldi temp, high($0280)
out OCR1AH, temp
ldi temp, low($0280)
out OCR1AL, temp

```

.....

Ջերմաստիճանների համեմատման և արագության փոփոխման ծրագիրը՝

.....

Compare:

```

    cp sensorout, threshold      ; համեմատում
    brsh Cooler
    clr temp
    out TCCR1B, temp            ; թայմերի կանգնեցում
    cbi PIND,5
    JMP Exit1

```

Cooler:

```

    ldi temp,0x01                ; թայմերի աշխատեցում
    out TCCR1B,temp

```

Cooleron:

```

    sbic PIND,0
    jmp exit
    in temp,OCR1AL
    cpi temp,MAX
    breq exitm
    inc temp
    out OCR1AL,temp

```

exitm:

```

    Delay counterex,$A0, countermid,$20,counterin,$10

```

exit:

```

    sbic PIND,1
    JMP exit1
    in temp,OCR1AL
    cpi temp,MIN
    breq exitl
    dec temp
    out OCR1AL,temp

```

exitl:

```

    Delay counterex, $A0, countermid, $20,counterin,$10
    JMP Cooleron

```

exit1:

```

    ret

```

.....

Հետազոտության արդյունքները. Ծրագիրը ներբեռնելուց և աշխատեցնելուց հետո ստացվել են հետևյալ արդյունքները.


- Երբ սրահի ջերմաստիճանը (sensorout) բարձր է սահմանված շեմային ջերմաստիճանից (threshold)՝ նկ. 4: Օսցիլոգրաֆում ցույց են տրված T1-ով ձևավորված ազդանշանները:

- Երբ սրահի ջերմաստիճանը (sensorout) բարձր է սահմանված շեմային ջերմաստիճանից (threshold), սակայն շարժիչի արագությունը դադարեցված է՝ նկ. 5:


- Երբ սրահի ջերմաստիճանը (sensorout) բարձր է սահմանված շեմային ջերմաստիճանից (threshold), սակայն շարժիչի արագությունն արագացված է՝ նկ. 6:

- Երբ սրահի ջերմաստիճանը (sensorout) ցածր է սահմանված շեմային ջերմաստիճանից (threshold), այսինքն՝ շարժիչն անջատված է՝ նկ. 7:


Նկ. 8-ում պատկերված են նկ. 4...6-ի օսցիլոգրաֆում ստացված ազդանշանները՝ համեմատության նպատակով (առաջին ազդանշանը միջին արագության դեպքում է, երկրորդը՝ դանդաղ, երրորդը՝ արագ): Նկարներից երևում է, որ բոլոր ազդանշանների դեպքում պարբերությունը մնում է հաստատուն՝ 0,5 մվ, սակայն արագությունների փոփոխման արդյունքում փոփոխվում են լարման բարձր և ցածր մակարդակների տևողությունները, որոնք այս դեպքերի համար կազմել են համապատասխանաբար՝ 0,318 մվ, 0,256 մվ/և 0,38 մվ:




Նկ. 4. Ծրագրի տեսքը աշխատեցված վիճակում, երբ sensorout-ը մեծ է threshold-ից, և շարժիչն աշխատում է միջին արագությամբ




Նկ. 5. Ծրագրի տեսքը աշխատեցված վիճակում, երբ sensorout-ը մեծ է threshold-ից, և շարժիչն աշխատում է դանդաղ



Նկ. 6. Ծրագրի տեսքը աշխատեցված վիճակում, երբ sensorout-ը մեծ է threshold-ից, և շարժիչն աշխատում է արագ



Նկ. 7. Ծրագրի տեսքը աշխատեցված վիճակում, երբ sensorout-ը փոքր է threshold-ից, և շարժիչն անջատված է



Նկ. 8. Ազդանշանների համեմատական գրաֆիկը

Եզրակացություն. Այսպիսով, հովացման համակարգը նախագծելուց և փորձարկելուց հետո կարելի է ասել, որ նրա հիման վրա հնարավոր է պատրաստել փակ տարածքների ջերմաստիճանը հսկող և կարգավորող սարք: Բացի այդ, կարելի է տվյալ նախագծի աշխատանքի հիման վրա պատրաստել միկրոկլիմայի այլ պարամետրերը հսկող և կարգավորող սարքեր, և նպատակ կա տվյալ նախագծին ավելացնել օդի հարաբերական խոնավությունը և շարժման արագությունը կարգավորող հանգույցներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Խալաթյան Ռ.Պ.** Կենսագործունեության անվտանգություն.-Երևան: Ճարտարագետ, 2014. – 114 էջ:
2. Texas Instruments, LM335 Datasheet, 2018.
3. Atmel Corporation, ATmega16 Datasheet, 2002.
4. **Շիրինյան Պ.Հ.** Միկրոկոնտրոլերներ: Ճարտարապետությունը, ծրագրավորումը և կիրառությունները.-Երևան: Ճարտարագետ, 2013. – 376 էջ:
5. **Շիրինյան Պ.Հ., Դավթյան Հ.Մ.** Միկրոկոնտրոլերներ: Լաբորատոր պրակտիկում: Ուսումնական ձեռնարկ.-Երևան: Ճարտարագետ, 2016. – 308 էջ:
6. **Muhammad Ali Mazidi, Sepehr Naimi, Sarmad Naimi.** The AVR microcontroller and embedded systems: using Assembly and C. Pearson Education, 2011. – 781 p.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 15.02.2019:

В.Г. ПЕТРОСЯН

ПРОЕКТИРОВАНИЕ УСТРОЙСТВА КОНТРОЛЯ И РЕГУЛИРОВАНИЯ ТЕМПЕРАТУРЫ В ЗАКРЫТЫХ ПОМЕЩЕНИЯХ

В настоящее время большое внимание уделяется параметрам микроклимата в закрытых помещениях (таких как производственные участки, учебные заведения, офисы и т.д.), которые влияют на здоровье и производительность рабочих, качество производства, безопасность и т.д. Одним из параметров микроклимата является температура.

В рамках данной работы была спроектирована и протестирована система контроля и регулирования температуры (система охлаждения). На основе полученных данных возможно спроектировать прибор-регулятор микроклимата с несколькими параметрами.

Ключевые слова: микроклимат, система охлаждения, контроль температуры, регулирование температуры.

V.G. PETROSYAN

DESIGNING INDOOR TEMPERATURE CONTROL AND REGULATION EQUIPMENT

Nowadays, much attention is paid to the microclimate parameters of indoor areas, such as manufacturing areas, educational institutions, offices, and so on. These parameters influence the employees' health, productivity, product quality, safety conditions, etc.

Within this study, indoor temperature control and regulation equipment (cooling system) has been designed and tested, which is one of the parameters of microclimate. The testing results have been positive, and can serve as a basis for creating the device. Also, based on this study, a similar device with different microclimate parameters can be designed and created.

Keywords: microclimate, cooling system, temperature control, temperature regulation.

L.A. MARTIROSYAN

**MACHINE LEARNING APPLICATION FOR THE MEMORY BIST
NETWORK DESIGN CHARACTERISTICS ESTIMATION**

For embedded memories' built-in self-test (BIST) and repair systems, one of the most critical design constraints are the gate count and power consumption. This article introduces an automated method for design characteristics estimation of the memory BIST network based on machine learning algorithms.

Keywords: RTL compiler, gate count, power consumption, characteristics, machine learning.

Introduction. Digital and analog logics with embedded memories have become an inseparable part of System-on-Chip (SoC) [1]. According Semico Research Corporation's projections average die area partitioning for all SoC types is forecasted to reach 75% for memory, 9 % for reused logic and 16% for new logic by 2019 [2]. Modern SoCs contain thousands of memories with different types and sizes. Therefore, to achieve profitable yield levels, advanced built-in test, and repair (BIST and BISR) solutions are used to diagnose, analyze, and correct the failures of embedded memories [3].

One of the most important points of designing embedded memories is the design planning phase, considering the gate count and power consumption that are the design characteristics of memory BIST Network [4].

It is possible to accurately estimate the design characteristics of the memory BIST network using synthesis tools [5]. Meantime, in the case of the memory BIST network when thousands of memory instances are generated, it is drastically time-consuming and inefficient. Hence, a quick design characteristics estimation methodology is needed for near-immediate feedback of design feasibility [4,5].

There are many articles devoted to this issue (e.g., [4 - 9]). In [10] – [13], a quick gate count and power consumption estimation method is presented for the hierarchy of the RTL compilers. To implement the methodology, the least square method of regression analysis is used. Compared with other methods, this methodology has greatly improved the output generation time and also the estimation error for characteristics in comparison with other quick estimation methods. At the same time, having the estimation carried out only after all the statistics is gathered still brings to an essentially increased RTL complexity and drastically increases the number of outputs for the BIST Network generating

compilers in the case of FinFET technology. Besides, variations of the estimation accuracy also become an issue which should be considered and resolved for the mentioned technology.

This is the reason why the investigation of timing and accuracy for the design characteristics methodology was continued further.

In recent years, an advanced statistics method named Machine Learning (ML) [14] has become widely used in the development of the complex systems' behavior. The main advantage of ML when applying to our case is a possibility of having the initial estimation without finishing the process of gathering statistics.

In this paper, we present the ML-based memory BIST network design characteristics estimation methodology.

1. A supervised learning model in ML. Our considerations will be within the supervised learning (SL) model [14]. Some details of it are adduced below for the completeness of reading.

SL is widely used in a variety of applications: object recognition, spam detection, speech recognition. The goal of SL is to predict the future events through applying what has been learned in the past to the new data by using labeled examples.

The SL algorithm starts with the analysis of the input training dataset. Then learning algorithms produce a function to make predictions about the output values. The output variable can be a continuous variable (regression problem) or a discrete variable (classification problem). After sufficient training, machines can provide outputs for any new input data. Another advantage of the SL algorithm is that it can compare its predicted output with the correct output, find errors and modify the model accordingly [14].

In the SL model X refers to “input” variables and can be named also input features. Y refers to “output” or target variable that we are trying to predict. A pair of $\{x^{(i)}, y^{(i)}\}$ is the training example. The dataset that we use for learning a list of m training examples $\{x^{(i)}, y^{(i)}\}$, where $i=1, \dots, m$ is called a training set. In the case of SL, the main goal is for a given training set to learn a function $h: X \rightarrow Y$ so that it correctly predicts the corresponding y value. The h function is called hypothesis [15]. Many different choices are available for the $h(x)$ functions: linear, polynomial, Gaussian, sigmoidal, Fourier basis, etc [14].

There are two methods to find the hypothesis function: gradient descent and normal equations. As the parameters of the memory BIST network show linear and polynomial behavior, we explored the hypothesis functions for those cases and applied regression models.

The accuracy of the hypothesis function is measured by a "Squared error function" [15]:

$$J(\theta) = \frac{1}{2m} \sum_{i=1}^m (h_{\theta}(x^{(i)}) - y^{(i)})^2. \quad (1)$$

The main aim of the algorithm is to find the θ values that describe the hypothesis function the best. There are two methods to find the hypothesis function: gradient descent and normal equations [15].

Normal equation is an analytical solution to the linear regression problem with a least-squares cost function [15]:

$$\theta = (X^T X)^{-1} X^T Y, \quad (2)$$

θ , X and Y are vectors.

Gradient descent is an iterative method. The algorithm starts by giving some values to our model parameters (weights and biases) and improves them slowly. To improve the weights, for the given set of weights, the cost function is calculated. Then we move the direction which reduces in the most amount. This step is repeated many times to continually minimize the cost function. The algorithm is described with equation (3) [15]:

$$\theta_j = \theta_j - \alpha \frac{1}{m} \sum_{i=1}^m (h_{\theta}(x^{(i)}) - y^{(i)}) * x_j^{(i)}, \quad (3)$$

where α is the learning rate that defines the step size, m is the size of the training set, θ_j is the solution for the current iteration.

Gradient descent and normal equations are two different approaches for defining the hypothesis function with their advantages and disadvantages (Table) [15].

Table

Difference between gradient descent and normal equations

Gradient Descent	Normal Equation
Must choose α	No need to choose α
Needs many iterations	No need to iterate
Works well when n is large	Works slow when n is large

2. ML-based estimation method. RTL compilers are template based parameterized descriptions. For the given values of parameters, they generate parameterized and regular instances. These parameters affect the design structure and functionality by increasing or decreasing the certain design characteristics.

Accordingly, the design characteristics of the memory BIST network changes from instance to instance. Therefore, there are functional dependencies between the design characteristics of instances generated by the RTL compilers and the values of the input parameters. By finding out the analytical representation of these dependencies it will be possible to quickly estimate the design characteristics of the memory BIST network [4], [5]. To receive exact analytical representations in [4], [5] the author proposes to apply the piecewise linear approximation technique. In this case, the design characteristics of the same parameters can be described with several interpolation functions. As the parameters of the memory BIST network increase, the estimation of design characteristics with this method will be extremely time-consuming. In papers [10] - [13], a quick design characteristics estimation methodology is proposed for the hierarchy of the memory BIST network that is based on the linear and polynomial regression. In this case, the design characteristics of the parameters are described with one function.

In brief, the method can be described as follows:

1. The input parameters that cause drastic variations in the design characteristics of the RTL compilers' hierarchy are figured out;
2. For each parameter range the most influencing values are chosen;
3. The real gate count and power consumption data have been obtained through a logic synthesis tool;
4. According to the dataset obtained after logic synthesis the Data Base (DB) is constructed for design characteristics;
5. Based on the DB information, a model is developed that, for different input parameters of the memory BIST network, automatically estimates the design characteristics;
6. The accuracy of the estimation method is checked by comparing its predicted output with the correct output. After finding the errors, the model modifies itself accordingly.

3. Experimental Results. We used the Synopsys BIST network [16] for experiments. It is called SMS (Self-Test and Repair (STAR) Memory System) network (Fig. 1), has a hierarchical structure, and consists of the Wrapper, Processor, Server components [4], [5].

With the SL design characteristics, quick estimation methodology is demonstrated for the SMS network Wrapper component. We researched the method in both cases: gradient descent and normal equations.




Fig. 1. Memory BIST Network Example

After logic synthesis, a DB was constructed for design characteristics. Fig. 2 shows these characteristics for one of the compilers – Wrapper Compiler. Wrapper gate count estimation results with the gradient descent are added there. The gradient descent consists of steps, the size of which is determined by α learning rate. For this example, α learning rate is 0.2. After the regression analysis with the gradient descent we got the following result. As can be seen from the graph, small steps have been taken to improve the hypothesis function that characterize the gate count behavior. The hypothesis function has been optimized during the iterations, but the resulting graph does not accurately describe the behavior of the gate count. To improve the behavior, we must change the value of the α coefficient. In the case of the memory BIST network there are numerous parameters, and the design characteristics estimation with gradient descent will be extremely complicated.




Fig. 2. Gradient Descent for the Wrapper Compiler gate count characterization

Fig. 3 shows the Wrapper gate count estimation results with the normal equation. Here, there is no need to define the α coefficient and there is no need of iterations. As can be seen from the graph, the hypothesis function describes the behavior of design characteristic precisely.




Fig. 3. Normal equation for the Wrapper Compiler gate count characterization

This experiment was performed for all the components of the SMS network. In the case of RTL compiler hierarchy, the training set for each parameter related design characteristics is not large. Therefore, according to the Table, the normal equation method will be a better solution. The experimental results also confirmed that assumption. Hence, for the SMS Network design characteristics estimation, a model was developed, using the normal equation method (for linear and polynomial cases).

The design characteristics' estimation model is implemented via Python language and embedded in every template of the RTL compiler hierarchy [16]. The method essentially improved the design characteristics estimation time, and the maximum achieved estimation error was close to 11%.

Conclusion. The quick design characteristics estimation methodology for memory BIST network based on ML is presented. The method provides higher automation possibility compared with other methods for design characteristics quick estimation. The method was applied to industrial RTL compilers and maximum achieved estimation error was close to 11%.

REFERENCES

1. **Prasad Acharya G., Asha Rani M.** Survey of Test Strategies for System-On Chip and it's Embedded Memories // 2013 IEEE Recent Advances in Intelligent Computational Systems (RAICS). - 2013.- P. 199-204.

2. <https://semico.com/content/worldwide-soc-market-forecast-approach-200-billion-2019-says-semico-research>.
3. A Guide to Understanding Embedded Memory Repair Options and Issues, Memory Repair Primer, 2007.
4. **Ter-Galstyan A., Mosikyan A.** An Approach for Quick Area Estimation of Compiler Generated RTL // Proceedings of the CSIT conference, September 19-23, 2005.- Yerevan, Armenia, 2005.-P. 485-490.
5. **Ter-Galstyan A.** An Automation Method for Gate-Count Characterization of RTL Compilers // East-West Design & Test Workshop, September 15-19, 2006.- Sochi, Russia, 2016.-P. 313-316.
6. **Fei Li, Lei He, Basile J., Patel R. J., Ramamurthy H.** High-Level Area and Current Estimation // International workshop.- Turin, Italy, 2003.- Vol. 2799.-P. 259-268.
7. **Damasevičius R.** Estimation of Design Characteristics at RTL Modeling Level Using SystemC // Information technology and Control.-2006.- Vol.35.-P. 117-123.
8. **Lamine A., Chouba N., Bouzaida L.** Memory BIST area estimator using Artificial Neural Networks // International Conference on Signals, Circuits and Systems.-2008.
9. **Lanping Deng, Kanwaldeep Sobti, Chaitali Chakrabarti** Accurate Models for Estimating Area and Power of FPGA Implementations // ICASSP.-2008.-P. 1417-1420.
10. **Martirosyan L.** A quick area estimation method for RTL compilers // Proceedings of the NAS RA and SEUA. Technical Sciences, ISSN 0002-306X.-2012.- Vol. 65, N3.-P.287-294.
11. **Martirosyan L.** A Quick Power Consumption Estimation Method for RTL Compilers // Computer Science and Information Technologies (CSIT).-2013.-P 112-116.
12. **Martirosyan L.** A Design Characteristics Estimation Methodology for the Hierarchy of RTL Compilers // East-West Design & Test Symposium (EWDTS).-Yerevan, 14-17 Oct, 2016.-P. 68-71.
13. **Martirosyan L.A.** The Design Characteristics Estimation Methodology for the Nanoscale RTL Compilers // Proceedings of the NAS RA and SEUA. Technical Sciences. -2017.-Vol. 70, N2.-P 218-226.
14. An Overview on Application of Machine Learning Techniques in Optical Networks / **F. Musumeci, C. Rottondi, A. Nag, I. Macaluso et al** // IEEE Communications Surveys and Tutorials. - 2018.
15. **Andrew Ng** Machine Learning course by Stanford University.
16. **Zorian Y., Shoukourian S.** Test solutions for nanoscale systems-on-chip: Algorithms, methods and test infrastructure // Ninth International Conference on Computer Science and Information Technologies, Revised Selected Papers, IEEE.- September 2013.

Synopsys Inc., Armenia. The material is received on 25.02.2019.

Լ.Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՑԱՆՑԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ**

Ներկայացված հիշողությունների ինքնաթեստավորման և ինքնավերանորոգման համակարգի ամենակարևոր նախագծային սահմանափակումներն են տարրերի քանակը և հզորության սպառումը: Ներկայացվում է նախագծային բնութագրերի ավտոմատ գնահատման մեթոդ՝ հիշողության ներկայացված ինքնաթեստավորման ցանցի համար, հիմնված մեքենայական ուսուցման ալգորիթմների վրա:

Առանցքային բառեր. RTL կոմպիլյատոր, տարրերի քանակ, հզորության սպառում, բնութագրեր, մեքենայական ուսուցում:

Л.А. МАРТИРОСЯН

**ПРИМЕНЕНИЕ МАШИННОГО ОБУЧЕНИЯ ДЛЯ ОЦЕНКИ ДИЗАЙН-
ХАРАКТЕРИСТИК СЕТИ ВНЕДРЕННОЙ СИСТЕМЫ
САМОТЕСТИРОВАНИЯ ПАМЯТИ**

Для встроенных систем тестирования (BIST) и восстановления памяти одним из наиболее важных ограничений дизайна являются количество вентилях и энергопотребление. Представлен автоматизированный метод оценки дизайн-характеристик сети внедренной системы самотестирования памяти на основе алгоритмов машинного обучения.

Ключевые слова: RTL-компилятор, количество вентилях, энергопотребление, характеристики, машинное обучение.

С.О. СИМОНЯН

**РЕШЕНИЕ ДИНАМИЧЕСКИХ ОДНОПАРАМЕТРИЧЕСКИХ
ЛИНЕЙНЫХ МАТРИЧНЫХ УРАВНЕНИЙ С ПРИМЕНЕНИЕМ
ДИФФЕРЕНЦИАЛЬНЫХ ПРЕОБРАЗОВАНИЙ**

Рассматриваются динамические однопараметрические матричные уравнения типа Сильвестра. Для решения этих уравнений предлагаются два метода, основанные на дифференциальных преобразованиях. Приводятся результаты решения одного модельного примера обоими предложенными методами.

Ключевые слова: динамические матричные уравнения; методы, основанные на дифференциальных преобразованиях; модельный пример.

Введение. Динамические однопараметрические матричные уравнения типа Сильвестра имеют вид

$$\frac{dX(t)}{dt} = A(t) \cdot X(t) + X(t) \cdot B(t), \quad X(t_0) = f_{ix}, \quad (1)$$

